ՀԵՐՈՍԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՈՒՄ»

Մ. Դ. ՁԱՔԱՐՅԱՆ

Հերոսի գաղափարը հայ գրականության մեջ նույնքան հին է, որքան ինքը՝ հայոց գրականությունը։ Պատմահայր Խորենացին «Հայոց պատմություն» գրքում, Հայաստան երկրի փառավոր անցյալի և թշվառ ներկայի հակադրությունը պայքարի զենք համարելով, անդրադառնում է ժողովրդի նախնիների՝ իմաստուն, խոհեմ ու քաջաքաջ դյուցազուն-հերոսների[1] մեծամեծ գործերին և սերունդներին հանձնում հեթանոս գուսանական երգերից նրանց մասին ժողովված պատմությունները, որտեղ «...մեր քաջ թագաւորաց ու զօրաւարաց արութեան ու նշանաւոր գործոց յիշատակութիւնը կ՚ըլլայ»[2]։ Հայ հերոսների նախահայրը «աստվածային ծագում ունեցող»[3] Հայկ Դյուցազունն է, և նրան անդրադառնալիս էլ առասպելում հատկապես շեշտվում է վերջինիս ըմբոստ, խիզախ, ազատատենչ ոգին։ Լ. Շանթի հավաստմամբ՝ «Հայկ և Բել» առասպելում մարմին է առել հայոց պատմությունը, «...հայ ժողովրդի համառ ու հավիտենական մաքառումը իր ինքնուրույնությունն ու ազատությունը ձեռք բերելու համար»[4]։ Հայոց հեթանոս հերոսներին՝ քաջակորով այրերին, պատմահայր Խորենացին ներկայացնում է համարյա միշտ արտաքին բարեմասնություններով։ Նրանց արտաքինը անբաժան է էությունից, և այս մասին է վկայում Արամը՝ քաջ, հայրենասեր և աշխատասեր մի այր։ Պատմահոր հավաստմամբ այդ գեղեցկադեմ, ինքնիշխան, ազատասեր ու առյուծասիրտ այրերը «կորեկի չափ» տարածք անգամ չէին զիջում թշնամուն՝ անվեհեր պաշտպանելով իրենց երկրի սահմանները։ Հայոց երկրի կառավարողները արդարադատ էին իբրև թագավորներ, իսկ որպես քաղաքական գործիչներ՝ հմուտ և հեռատես։ Երկրի քաղաքական ծանր իրավիճակը, V դ. երկրորդ կեսից սկսած, հայ մտավոր կյանքում առաջ է բերում ոչ միայն վհատություն, այլև կորցրած անկախությունը վերանվաճելու, երբեմնի ազատ, հզոր Հայաստանի վերաստեղծման տրամադրություն։ Քերթողահայրը, «Հայոց պատմության» մեջ, մեծավաստակ գրականագետ Մ. Աբեղյանի կարծիքով, նպատակադրվում է «...անցյալից ստեղծել օրինակելի քաղաքական տիպարներ, ղովերգել անցյալի հերոսներին։ ...Մեր ծնեցնել դեպի հայրենիքը, սեր դեպի ազատությունը... Այս նպատակին էին ծառայում նրա մշակած կերպարները, և՛ Հայկը, և՛ Արամը, և՛ Տիգրանը, և՛ մյուսները»[5]։ Պատմահայրը պանծացնում էր թեկուզ հեթանոս, բայց այն հին հերոսներին, որոնք խիզախորեն մարտնչում էին երկրի ու ժողովրդի բարօրության համար,

---

1 Դ. Վարուժանը իր «Հերոսը» հոդվածում այդպես էլ նրանց անվանում է. «...առասպելներն ու զրույցները մեզի հերոսները կը ներկայացնեն...» (Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն, Երկերի ժողովածու 3 հատորով, հ. 3, Երևան, 1987, էջ 116)։

2 Գ. Զ ա ր ա ր հ ա ն ա լ ե ա ն, Հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԴ դար), Վենետիկ, 1897, էջ 144։

3 «Հերոսը... հին հունական դիցաբանության մեջ որդին կամ սերունդն է աստծո և մարդամահկանացուի... Այս բառը բացատրելիս՝ ժամանակակից ազդախոսները, առանձնացնելով հատկապես պաշտպանողի, հովանավորի նրանց դերը՝ միանշանակ բացատրություն չեն տալիս... նշելով նաև հարազատությունը աստվածուհի Հերայի անվան հետ...» (A. A. T a x o-Г о д и, Греческая мифология, М., 1989, с. 199).

4 Լ. Շ ա ն թ, Երկեր, հ. 5, Պեյրութ, 1948 , էջ 13։

5 Մ. Ա բ ե ղ յ ա ն, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 314, 315։

համոզված, որ անվեհեր հերոսներով է երկիրը ազատ ու անկախ, իսկ ժողովրդի կյանքը՝ բարեկեցիկ։ Ահա և V դ. հայ քրիստոնյա հերոսը՝ Վարդան Մամիկոնյանը, որը, ըմբոստանալով պարսից Հազկերտ Բ-ի խարդախ ու դիվային ծրագրի դեմ, Ավարայրում իր ժողովրդին հերոսության է ոգեկոչում և նահատակվում։ Ոչ միայն Վարդանը, այլև «Մամիկոնյան կտրիճները իրոք մի մի հերոսներ էին... Եւ պատվաբեր ամեն մի պատմության»[6],—անդրադառնալով քաղաքական անկախության համար նախարարական այդ տոհմի սերնդեսերունդ մղած հերոսական պայքարին՝ հավելում է նշանավոր պատմաբան Ն. Ադոնցը։ IX դ. կեսերին հայ ժողովրդի քաղաքական երազանքը իրականանում է. Արշակունյաց թագի համար պայքարի ելած ժողովուրդը չորս դար հետո իր հաղթանակն է տոնում՝ ի դեմս Բագրատունյաց նոր թագավորի՝ Աշոտ Երկաթի։ «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսում արդեն հայ ժողովրդի դարեր ի վեր մղած հերոսական պայքարն է փառաբանվում։ Այս էպոսը հայ հին վեպերի՝ «Վիպասանքի», «Պարսից պատերազմի» և «Տարոնի պատերազմի» ոգին ու շունչն էր, ասես, ժառանգել։ Հովհ. Թումանյանի կարծիքով, «Սասունցի Դավիթը» ուղղակի սերում է Հայկի առասպելից. «Հայ դյուցազնական... «Սասունցի Դավիթ» վեպը Հայկի առասպելն է...»[7]։

XVIII դ. վերջին քառորդից մինչև XIX դ. առաջին կեսը պատմական հարուստ իրադարձությունների ժամանակաշրջան էր՝ ֆրանսիական հեղափոխություն, իտալական ազգային-ազատագրական պայքար, որոնք և հայ կյանքում որոշակի քաղաքական ազատագրության տրամադրություններ ստեղծեցին։ XIX դարը ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների շրջան էր, և հայերը, իբրև քրիստոնյա ժողովուրդ, ռուսական զենքի հաջողությանն առնչվող որոշակի հույսեր էին ակնկալում։ Թվում է, նման մտայնության արգասիք են հայ մշակութային կյանքում վարդ ու սոխակ գովերգող տաղերի կողքին հնչող հայրենասիրական թեմայով գրված Հ. Վանանդեցու «Արփիական Հայաստանի», «Ոսկի դար Հայաստանի», «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի» ստեղծագործությունները։ Այս վերջինում հեղինակը, «Նախնեաց մերոց զարիութիւն... նկարագրեալ...»[8], ոգեկոչվում են հայոց հին հեթանոս հերոսների քաջագործությունները։ Ա. Բագրատունու «Հայկ Դիւցազնի» անմիջական ազդեցությամբ էլ, ասես, գրված են Ղ. Ալիշանի, Ռ. Պատկանյանի շոնդալից երգերը։ XVII—XVIII դդ. հայ քաղաքական շարժման ղեկավար գործիչները, ի տարբերություն նախորդների, պետականության վերականգնման մտորումներում անդրադառնալով զուտ ինքնուրույն ուժերին ապավինելու կողմնորոշմանը, նկատի ունեին, նախ՝ եվրոպական պետությունների, ապա՝ Ռուսաստանի օգնությունը։ Մտայնություն, որը ծայր առնելով Մ. Բաղրամյանից և Շ. Շահամիրյանից, հասնում է մինչև XIX—XX դդ.։ Խ. Արովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում գրում է. «...բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ ետ՝ իր առաջին փառքին հասնի»[9]։ Ռուսական այս կողմնորոշմանը զուգահեռ հայ իրականության մեջ ակա էր արևմտահայ որոշ գործիչների, մասնավորապես, Մ. Օրմանյանի և նրա քաղաքական համախոհների չափավոր ու զուսպ, պահպանողական դիրքորոշումը։ XIX դ. առաջին կեսին կլասիցիզմի բանական օրենքներով առաջնորդվող «Հայկ Դիւցազն» պոեմի կողքին Խ. Արովյանը կերտում է Աղասու կերպարը, հայրենիքի ազատության համար զենքը ձեռքին մարտնչող այդ հերոսին՝ քնարական հարուստ ներաշխարհով, աշխարհի, մարդ արարածի հանդեպ ունեցած ուրույն կողմնորոշմամբ, քաղաքական, փիլիսոփայական և սոցիալական հարցերի ինքնատիպ պատկերացումներով։ Ազգային էպոսի հերոս-դյու-

---

6 Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 42։

7 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959, էջ 373։

8 Հ. Վանանդեցի, Ոսկի դար Հայաստանի, Զմյուռնիա, 1841, էջ 12։

9 Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1948, էջ 114։

ցազուն հիշեցնող Աղասին, որ պայքարում էր իր ժողովրդին պարսից լծից ազատելու համար, արդեն հոգեոր-բարոյական և մարդկային նկարագրով նորություն էր հայ գրականության պատմության մեջ։ Ժամանակի հասարակական առաջադեմ գաղափարներ որդեգրած Խ. Աբովյանի հերոսի կերպարում յուրովի զուգորդվում, ներհյուսվում են ռուս և եվրոպական դասական գրականության ավանդները, արևմտաեվրոպական փիլիսոփայության միտքը, ազգային և համաշխարհային հոգևոր-մշակութային նվաճումները։ Գրականագետ Էդ. Ջրբաշյանի հավաստմամբ «...Աղասին հեղինակային ես-ի երկվորյակն է, նրա գաղափարաբանության, ծրագրերի ու նպատակների կրողը»[10]։

Հայ գրականության մեջ, թվում է, հերոսի կերպարը հետևյալ ուղեծրով է ներկայանում՝ առասպելական հերոսներ՝ Հայկ, Վահագն, հեթանոս թագավորներ, որոնցից նշանավորը Տիգրան Մեծն է[11], ապա քրիստոնյա հերոսներ՝ հինգերորդ դարից սկսած։ Վ. Մամիկոնյանը այն կատարյա հերոսն է, որը, համարյա առանց էական փոփոխությունների, գոյատևել է մինչև XVIII դար՝ մինչև թուրք-պարսկական բռնությունների դեմ ելած Դավիթ-Բեկը։ Ահա և XIX դ. առաջին կեսի գրական հերոսը՝ Աղասին, որից էլ հիմնականում ծայր է առնում նոր և նորագույն շրջանի հերոսի ձևավորման ընթացքը[12]։ Եվ, թերևս, պատահական չէ, որ հայ ժողովրդի զավակներին հերոսական պայքարի ոգեկոչելիս՝ Վ. Մամիկոնյանի և Աղասու կերպարներին է դիմում Ռ. Պատկանյանը՝ «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը», «Աղասու մոր երգը»[13]։ Ուշագրավ է, որ առաջին ստեղծագործության մեջ դարեր ի վեր մեր ժողովրդի մղած պայքարը սկիզբ է առնում Հայկ Նահապետից. «Հիշեցեք Հայկին, որ բուռ քաջերով դեմ կեցավ Բելին...»[14]։ Վ. Մամիկոնյանի կերպարի կերտման համար գրական ազդակ է հանդիսացել Ղ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմը, ուր հերոսը հետևյալ կեցվածքով է ներկայանում. «Աջ ու ձախ զարներ փրոեր ու անցներ, Ջանտառ զորքերուն անապատ փոխեր...»[15]։

Հայրենիքի ազատության սուրբ գաղափարի համար ոտքի ելած Բաֆֆու հերոսներից են Սամվելը և Դավիթ-Բեկը։ Իր տոհմի քաջագործություններով հպարտ՝ Սամվելը սպանում է պարսից Շապուհի խոստումներից շլացած ծնողներին։ «Դավիթ-Բեկ» վեպի հերոսը XVIII դ. առաջին քառորդի Սյունիքի հերոսական ապստամբության ղեկավարն է, որի փառավոր հաղթանակներից ոգևորված, մոտակա շրջանների քաջերը «...գային առ Դաւիթ 'ի զօրաւորագունիցն և միաբանէին...»[16]։ Այս հերոսի հաղթանակները դարձան XVIII դ.

---

10 Բանբեր Երևանի համալսարանի, 1989, № 1, էջ 58։

11 Ստ. Պալասանյանը, հայոց բանահյուսության զարգացման ընթացքից ելնելով, հետևյալ տարբերակմամբ է ներկայացնում հերոսներին։ Դիցաբանական շրջանի «...աստուածները համարվում են ամեն բանի սկիզբը...» և որպես օրինակ մատնանշում է Վահագնի առասպելը։ Հաջորդը դյուցազնական շրջանի հերոսներն են՝ կես-մարդ, կես-աստված. «Աստվածների հետ ժողովուրդը սկսում է նրգել այն դյուցազուններին, որոնք իրանց երևելի գործքերովը առաջինների կարգը դասվելու արժանի են եղել...»՝ վկայակոչելով Տորք Անգեղին։ Այնուհետև պատմական շրջանի հերոսներն են, երբ նրանց ֆիզիկական ուժն ու զորությունը իրենց տեղը զիջում են խելքին ու բանականությանը։ Արտաշեսին, Արտավազդին նվիրված առասպելները հենց այս վերջիններն են (Պատմություն հայոց գրականության, աշխատասիրեց Ստեփան Պալասանյան, Թիֆլիս, 1865, էջ 109, 111)։

12 Իր քաղաքական կողմնորոշմամբ Ավ. Իսահակյանի կերտած հերոսը նախաարովյանական հերոսին է հոգեհարազատ։

13 Նշված առումով այս բանաստեղծության մեջ հատկանշական է հետևյալ տողը՝ «Քեզ ուժ կուտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ Վարդան» (Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1963, էջ 81)։

14 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 25։

15 Ղ. Ալիշան, Երկեր, Երևան, 1981, էջ 51։

16 Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 786։

հայ քաղաքական, ազատագրական պայքարի բարձրակետը։ Րաֆֆու «Խենթը» և «Կայծերը», ասես, նախապատրաստեցին ազգային ֆիդայի հերոսներին, որոնք զենքով պայքարի ելան՝ հայրենի երկրի ազատության, հայ մարդու պատվի համար։ Այդ քաջարի մարտիկների առաջին երգիչը Ավ. Իսահակյանն էր՝ «Մասսա Մանուկ» վիպասքում և «Հայդուկի երգեր» բանաստեղծություններում։ Արևմտահայ գրական կյանքում Մ. Պեշիկթաշլյանի «Զեյթունի երգեր» շարքի հերոսների կողքին («Հայ քաջորդին», «Մահ քաջորդույն», «Թազումն քաջորդույն», «Հայ քաջուհին») XX դ. սկզբներին մի շարք նշանավոր գրողներ, արյան և զենի հաբագաությամբ, անդրադառնում են հին հեթանոս, արի և ուժապաշտ աստվածներին՝ նրանց ծնրադիր փառաբանություններին առնչելով հայոց երկրի փրկությունը։ Գրականագետ Ն. Աղբալյանի կարծիքով, հեթանոս այս շարժումը, որպես «թուրքահայ վերածնության» ազգային իդեալների և տեսիլների արտահայտություն, հետամուտ էր «ուժի և գեղեցկության»[17] պահանջի։ Դեպի հեթանոս գարերն ուղղված այս խորհրդածությունների հանրագումարն է Սիամանթոյի «Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ» ձոներդը[18]։

Արևելահայ գրականության մեջ Ավ. Իսահակյանը կերտում է XIX դարի վերջերի և XX դարասկզբի ազգային հերոսի մոդելը։ Հերոսի մասին մանրամասն ու հիմնավոր գրառումներ ենք գտնում բանաստեղծի օրագրում՝ «Հիշատակարանում», որի հրատարակումից հետո էլ (1977 թ.), սոցռեալիզմի գեղագիտության կաղապարված մտայնությամբ թելադրված, անհնար էր անդրադառնալ այդ գաղափարի բացահայտմանն ընդհանրապես։ Հերոսի մասին օրագրային առաջին հիշատակությունը թվագրված է՝ «1891 թ. դեկտեմբերի 24, Գևորգյան ճեմարան»։ 16-ամյա ռոմանտիկ պատանին, հակադրվելով մարդկանց չնչին կրքերին, միօրինակ ու հոգսաշատ առօրյային՝ գրում է. «Ինչո՞ւ ամենքս մի-մի հերոսներ չպիտի լիննք, ինչո՞ւ չպետք է մենք կարողանանք անել այն, ինչ որ ցանկանում ենք»[19]։ Հասկանալի է, որ հերոսի մասին պատկերացումներն այստեղ անորոշ են և չձևավորված։ Գևորգյան ճեմարանի աշակերտը երազում է հերոսությունն մասին ընդհանրապես և այդ արարքը գործողության մեջ՝ մասնավորապես։ Նրա երազած հերոսը գաղափարի մարտիկ չէ, քանի որ ազատության մասին նրա խոհերը հանգում են ընդամենը բանաստեղծների երազանքների իրականացմանը։ Անվստահ սեփական կարողության հանդեպ՝ պատանին հայացքն ուղղում է դեպի Նապոլեոնի զորքը. «...թող տան ինձ Նապոլեոնի զորքերն ու հարստությունը, ես Եվրոպայի ցնորքները կատարեմ» (22)։ Ճշմարտություն որոնող պատանեկան մտքի սլացքով էլ նա մի դեպքում երազում է բանաստեղծ դառնալ, այլ դեպքում՝ Նապոլեոն, երրորդ դեպքում վերադառնում իր երդմանը. սովորել՝ համաշխարհային մտքի յուրացմանն առնչելով իրեն հուզող հարցերի մեկնաբանությունը՝ մարդու, կյանքի, աշխարհի ճանաչողության մասին։ Հերոսանալու գաղափարը պատանու կարծիքով առնչվում է առաջին հերթին գիտելիքին. «...նախանձում եմ, որ մարդիկ զարգանում են, հենի են դառնում—ես ուզում եմ միայն զարգանալ ու հենի դառնալ...» (170)։ «Հիշատակարանում», ինչպես հավաստում է հեղինակը, հերոսը հիմնականում

17 Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. 2, Պեյրութ, 1966, էջ 205։

18 Դեպի դարերի խորքն ուղղված հետադարձ այս հայացքի մեկնությունը Դ. Վարուժանի նամակներից մեկում այսպես է ձևակերպված. «...Մարդկության դյուցազնական դարերուն „nostalgi"-ն ունեմ։ Երբ պիտի դառնա հեթանոսությունը և հին հաղթություններ, դոր վաստակելու համար հերոսներ պետք էին՝ այլ ոչ դիվանագիտություն» (Դ. Վարուժան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1987, էջ 386)։ Գրողի այս խոհերը առնչվում էին աշխարհի հզոր տերությունների դիվանագիտական խաղերին, որոնց արդյունքում իր երկրի ու ժողովրդի դարեր ի վեր ձգվող արյունոտ ճակատագիրն էր։

19 Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 22։ Այսուհետև «Հիշատակարանից» արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից։

նույնանում է Իսահակյան-մարդուն, գրողին, մտածող-ստեղծագործողին. «...հետզհետե մշակում եմ այն տիպը, որ իմ գրվածքներում ես պիտի ինձ նկարագրեմ, ես պիտի իմ մեջ մարմնացնեմ մի հոգի, որին ես պիտի տամ գերմարդ (übermesch) անունը» (121)։ Հեղինակի պատկերացմամբ, գերմարդն առաջին հերթին ֆիզիկապես կատարյալ անհատ է, որի արտաքին բարեմասնություններն արդեն իսկ հոգևոր սկիզբ են ակնկալում։ Իսկ նրա հետաքրքրասիրության ոլորտն անընդգրկելի է. «Խելոք, մտածող ու քննող, անալիզ անող ու հարցասեր, սկեպտիկ և միշտ մտորող...» (121)։ Ինչպես հեղինակը գերմարդու կերպարով ինքն իրեն է ներկայացնում. «Սոս-հերոս Մանթաշեցի—ահա իմ հերոսի—իմ անունը» (144), սակայն միաժամանակ մերժում է միայն իր «ես»-ի միջոցով ինքնահաստատման գործընթացը. գրողի կերտած հերոսը համամարդկային վշտի ու տառապանքի կրող է միաժամանակ, համամարդկային արժեքներ մարմնավորող։ Հերոսը պիտի կարողանա իր ես-ից զատ մարմնավորել նաև մարդկությանը, ապրել նրա վշտով ու երգով, տխրությամբ և ուրախությամբ։ Գրողի կերտած հերոսին բնորոշ է ոգևորությունն ու ձգտումը դեպի բարին ու կատարյալը, որը պիտի լինի «հերոսի հետ անբաժան, ինչպես ուժը նյութից անբաժան է» (125)։

Հերոսի կերպարը օրագրում ձևավորվում է հատկապես 1894—95 թթ. գրառումներում։ Նա առաջին հերթին իր ժողովրդի ազգային-ազատագրության ուղիների մասին խորհրդածող անհատն է, որը պատրաստ է զոհվելու կյանքը՝ հանուն հայրենիքի ազատության։ Հայրենասեր, ազատամիտ և ըմբոստ անհատը ճշգրիտ գիտակցում է իր պարտքն ու պարտականությունները ժողովրդի առջև և այդ իսկ պատճառով էլ ըմբոստության կոչ անում նրան։ Նմանօրինակ դատողությունները, հասկանալի է, վերաբերում են երկատված հայրենիքի քաղաքական ճակատագրին, և նրա հերոսը, բնականաբար, առաջին հերթին ազգային-ազատագրական շարժումը մարմնավորող, ժողովրդի դժնդակ ճակատագիրը ողբերգորեն վերապրող անհատն է։ Գրողի կարծիքով, մարդը կարող է հերոս դառնալ միայն այն դեպքում, երբ բարոյական որոշակի սկզբունքների է դավանում։ Նախ քրիստոնեական, ապա կանտյան բարոյական սկզբունքները յուրացրած գրողը ստեղծում է իր պատկերացրած հերոսը (Homo morails), որին զբաղեցնող հարցերի հարցը հայրենիքի ազատության գաղափարն է։ Բարոյական անհատը ոչ միայն սիրում է իր հայրենիքը, այլև հարգում դիմացինի հայրենիքը, հասկանում նրա ազատատենչ ձգտումները։ Իսահակյանական հերոսի բարոյական չափանիշը ճշմարտությունն է՝ համաձայն Արիստոտելի այն ասույթի, ըստ որի, «Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունն ավելի եմ սիրում»։ Գրողի կարծիքով, միայն բարձր բարոյական նկարագրի տեր անհատը կարող է հերոս դառնալ, և բարոյական կատարելությունն էլ նրա ստեղծած հերոսի բարձրագույն արժեքն է։ Երկրում տիրող ապականությունը «մաքրել» ցանկացող հեղինակը երազում է բարոյական հերոսներով զարդարել «երկրի կուրծքը»։ Քանի որ, գրողի համոզմամբ, բարոյական մաքրություն կփրկի աշխարհը, ուստի և Իսահակյան-մարդը ձգտում է անաղարտ տեսնել իրեն շրջապատող մարդկանց, բոլոր մտերիմ-հարազատներին, որոնք թանկ են իր համար և սիրելի. «...Ես ուզում եմ իմ սիրելիներից, իմ պաշտելիից... հերոսներ ստեղծել...» (164)։ Այլ դեպքում էլ համոզված, որ մեկ հերոսը ի զորու չէ հասարակության ապականած ավգյան ախոռները մաքրելու, որոշում է գոնե շարժուն, գործունյա ուժ լինել, ամպ ու կայծակ լինել այդ մեռած հասարակության մեջ։ Եվ բոլոր դեպքերում հերոսը նույնանում է բնության հզոր, վիթխարի երևույթների հետ։

Իսահակյանի հերոսը օժտված է նաև զորեղ կամային գործոնով։ Սակայն, իհարկե, կամք ունեցող յուրաքանչյուր մարդ չէ, որ կարող է հերոսա-

նալ։ Իր կամքը[20] վեհ ե վսեմ գաղափարների իրականացմանը ծառայեցնող մարդուն է նա հերոս համարում։ Եվ այս նկատառումով էլ հետադարձ հայացքով նա ինքն իր համար մեկնում է մարդկային սոցիալ-տնտեսական, հոգևոր-բարոյական այն բոլոր ազդակները, որոնք խոչընդոտ եղան և իրեն՝ անհատ, մտածող և ստեղծագործող Իսահակյանին. «...սերս մի հսկա վեպ է, դրամա է. արտասահմանի քաղցած կյանքս. բանտի սոսկալի կյանքս մի-մի տրագեդիաներ են, ...այդ բոլոր ղգացմունքներից ես հազիվ մի հազարերորդ մասը կարողացել եմ գրել, աշխարհին հայտնի անել...» (243)։

Օրագրում ներկայացնում է նաև հայրենիքի ազատության համար մարտադաշտ մեկնող հերոս Իսահակյանը, որը հրաժեշտի խոսք է հղում հարազատներին, բարեկամ-ծանոթներին, սիրած աղջկան, սակայն առաջին հերթին՝ գիտությանը, պաշտած փիլիսոփաներին. «Դե՛հ, մնաս բարև, առայժմ գիտություն, սիրելի մարգարեներ ու փիլիսոփաներ, մնաս բարև, մայրիկ, հայրիկիս շիրիմ, Շուշիկ, եղբայրներ... Ես սլանում եմ ընկերներիս հետ գործի ու կռվի դաշտը։ Ես ձեզ բոլորիդ սիրում եմ... Ինձ մի՛ մոռացեք...» (190)։

Հերոսի բարոյական բարձր դրսևորումները Իսահակյանը առնչում է նաև անշահախնդրության գաղափարին։ Ճանաչելով հանդերձ XX դ. նյութապաշտ դարձած մարդ-էակին, հուսախաբ՝ ժամանակի շահամոլ մարդ-արարածի բարոյական նկարագրից, հեղինակը հետադարձ հայացք է նետում դեպի քաջաքակրթության արշալույսը՝ Հունաստան, երբ «...ամենամեծ բանաստեղծը իր գրվածքի համար մի դափնյա պսակ էր ստանում» (152)։ Իսահակյանը հոգևոր արժեքի նման գնահատումն է համարում ճշմարիտ։ Մարդու նյութամոլ հակումները մերժելով՝ հեղինակը հերոս չի համարում այն մարդուն, որը սեփական հաճույքները, նյութական վայելքը վեր է դասում հոգևորից, համոզված, որ նյութի պաշտամունքը մարդ արարածին մանրացնում է, դարձնում փոշու հյուլե, մինչդեռ Իսահակյանի հերոսը տիեզերքի խորությունն ունեցող անհատն է։ Բոլոր դեպքերում հերոսի արարման ընթացքը գրողին ուղղում է դեպի բնությունը, և ստեղծում ոչ միայն մարդ-հերոս, այլև՝ «...տիեզերքներ, արծիվներ, առյուծներ...» (164)։ Վերջին երկուսը մարմնավորում են տիեզերքի հզորությունն ու վեհությունը՝ մեկը թռչունների արքան, մյուսը՝ գազանների։

Իսահակյանի կարծիքով, հերոսանալու առաջին և հիմնական ճանապարհը զարգացածությունն է, և գրողն այն առնչում է գիտելիքին. միմիայն զարգացած մարդը կարող է հերոսանալ և իրեն էլ, իբրև հերոսի, նույնացնում է բնության վիթխարի երևույթների հետ. «...ուզում եմ ես միայն բարձր արև լինել... թող մարդիկ բարի, ազնիվ, համեստ ու անուշ ծաղիկներ լինեն։ Ես՝ հերոս՝ արև» (170)։ Արևի հետ օրագրի հեղինակի համեմատություն-զուգահեռը, որ հանդիպում է բազմիցս, բնականաբար մեկնաբանության կարիք ունի։ Թվում է՝ այստեղ ոչ միայն ազգային մտայնությամբ պայմանավորված հեթանոս սկիզբն է. «...Հայոց հին, ուժապաշտ ոգին քրիստոնեական ձև առած է... Շարականներու մեջ արևի այդքան երկար տողեր հատկացնելն ալ ադ ցույց կուտա»[21]։ Այս զուգահեռը, կարծես թե, նաև կյանքի գոյության խորհրդանիշն է իր մեջ ներառում։ Հերոսը արև է, որովհետև լույս ու ջերմություն է սփռում մարդկանց հոգիներում, արև է, որովհետև նրա ճառագայթներին դիմակայած դույները որոշակի կամք են ամբարում իրենց մեջ։ Գրո-

---

20 Մարդ-էակի կամային գործոնի դերի մասին իսահակյանական այս խորհրդածությունները ազգային գրականության մեջ հարաղատանում են Մ. Նալբանդյանին. «...Մարդուն ...այդ կամքը ահա շինում է նրան մի բարոյական էակ։ Բնության համար չկա ոչ մի բարոյական խնդիր, բայց մարդու համար կա...» (Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1947, էջ 260)։

21 Ն. Ադրալյան, Պատմություն հայոց գրականության, Բեյրութ, 1970, էջ 282։

դի հենց այս վերջին՝ արև-հերոս մտայնությունն առավել շոշափելիորեն ներկա է նաև Սարյանի կտավներում՝ արևից խանձված, նրա այրող կիզիչ ճառագայթների բոցին դիմակայած գույներում՝ վառ, թանձր ու խանձված։ Եվ քանի որ հերոսի ինքնադրսևորման հիմնական նախապայմանը Իսահակյանը համարում է կամքը՝ «Կամք-տոկալ, աշխատել» (289), իսկ յուրաքանչյուր դիմակայված էություն հենց ինքը կամքն է, ուստի, Իսահակյանի հերոսը արևն է, իսկ քաջերն ու իմաստունները բնության մյուս, արևից պակաս զորեղ երևույթներն են՝ «հեռվից գեղեցի՜կ, գեղեցի՜կ» (170)։ Իսահակյանի պատկերացմամբ հերոսը նա է, ով իր իդեալն ու դավանանքն ունի և լույս է արարում։ Հենց այս է պատճառը, որ օրագրի հեղինակը շարադրանքի վերջում, կարծեք, բնութագրում է իրեն. «Ես վազում եմ դեպի լույսը—արևը, որ ստվերս իմ հետևից գա, իմ հետևից գաք դո՜ւք, մարդի՜կ» (185)։ Լույսը հերոսի[22] կյանքի նպատակն է, գոյության իմաստը, և լույսի գաղափարը հեղինակի մտայնության մեջ ուրույն ընթացք է ապրում, առավել խոր մեկնություն-եզրակացությունների է հանգում՝ լույսի գոյությունն առնչելով տիեզերքի, աստղերի, ազգերի և մարդկության կյանքին։

Մարմնավորելով բարին ու առաքինին՝ Իսահակյան-հերոսը նպատակադրվում է վերափոխել մարդկանց՝ նրանց գործած չարությունները իր վրա վերցնելով։ Այս քրիստոնեական[23] ինքնամաքրման, հոգևոր անթերիության ձգտման տրամադրությունը, որ հայ գրականության մեջ կատարելության հասավ հատկապես Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում, նաև իսահակյանական հերոսին բնորոշ կարևորագույն հատկանիշն է։

«Հիշատակարանում» Իսահակյանը քննում է նաև մարդ-հերոս զուգահեռը։ Նրա կարծիքով, մարդիկ այն արարածներն են, որոնք քաղաքակրթվել են այն աստիճանի, որ «...գիտեն խոսել, կուլտուրա ունեն ու ապրում են...» (154)։ Նրանք հերոս չեն, որովհետև բնության մասնիկ մարդը ի զորու չէ մեկնելու ո՜չ իրեն, ո՜չ էլ բնության խորին խորհուրդները, մինչդեռ հերոսները վեր են կանգնած մարդկանցից իրենց հոգևոր նկարագրով, բարոյական բարձր չափանիշներով, միաժամանակ փորձում են ճանաչել և՛ իրենց, և՛ բնության գաղտնալից էությունը։ Այս պատճառով էլ նրանք «...մի նոր սերունդ են, զարգացման ամենավերջին կազմող օղակը...» (154)։ Մարդուն և հերոսին խստորեն սահմանազատելով հանդերձ՝ գրողը նրանց տարբերակման գլխավոր պայմանը, ինչպես նշվեց, համարում է ներքին բարոյական համոզվածությունը։ Իսահակյանի կարծիքով հերոսի երջանկության կենսափիլիսոփայության հիմքում բարերարությունն է. «Նա գործում է բարիք, որովհետև նա խորը զգում է բարին ու չարը, և անուժ է նրա մեջ չարը՝ բարուն խեղդելու, ուստի այդ ներքին կռվից հաղթանակը տանում է բարին...» (141—142)։ Հերոս մարդուն օժտելով հոգևոր-բարոյական բարձրագույն արժեքներով՝ հեղինակը այն տեսնում-հաստատում է գրական կերպար ստեղծելուն զուգընթաց, հենց իր մեջ։ «Հիշատակարանում» հանդիպում ենք բազմաթիվ գրառումների, ուր հերոսի մեկնությունները ավարտվում-ամբողջանում են «Ես հերոս եմ» հավաստիացմամբ։ Եվ եթե օրագրային առաջին տարիների գրառումներում այս մտայնությունը ձևավորման ընթացք է ապրում, ապա 1894 թ. առավել կայուն, ամբողջական հիմնավորում է ստանում։ 1894 թ. դեկտեմբերի 18-ի «Իմ Հայր-մերը» գրառման մեջ, գրողը բարոյական իդեալ

---

22 Տասնամյակներ անց, ժամանակի սոցիալ-քաղաքական և գեղագիտական կողմնորոշմամբ պայմանավորված, հերոսի կերպարը ուրույն ձևով է ներկայանում Պ. Սևակի պոեզիայում (Մարդը ափի մեջ, Երևան, 1963, էջ 101, Եղեցի լույս, Երևան, 1969, էջ 24)։

23 Մ. Արեղյանը գրում է. «Մեր գրականության մեջ մեր գրականության սկզբում հենց երկվություն է մտնում։ Մեկն աշխարհական բանաստեղծությունն է, շարունակություն հեթանոսականի... մյուսը եկեղեցական բանաստեղծությունն է... որ ունի եկեղեցական բանաստեղծությունն ընդհանրապես քրիստոնյա ազգերի մեջ...» (Մ. Արեղյան, Երկեր, հ. 5, Երևան, 1975, էջ 322)։

պատկերացումներն է իրեն վերագրում՝ դիմելով ըղձական եղանակի բայաձևերին. «Լինիմ ազնիվ, զգայուն, խելոք, լինիմ կարեկցող, զորեղ, լինիմ հափառական քարոզող, հեղափոխող կռվող» (143)։ Պատահական չէ, որ միմյանց հաջորդող ածականներն ու ենթակայական դերբայները ավարտվում են «կռվող» բառով, քանի որ նա հերոսի սկիզբը և վերջը մաքառմանն է առընչում. դաղափար, որ դարեր ի վեր անբաժան է եղել հայ ժողովրդի քաղաքական մտայնությունից։

1896 թ. մարտի 2-ի գրառման վկայությամբ, Իսահակյանի հերոսին զբաղեցնում է կյանքի ունայնության փաստը. «...ամեն ինչ անցավոր է, և՛ մեծ աշխարհի վիշտը, և՛ եղբայր-մարդերի տանջանքը... և հենին ծովի ալիքներից էլ զորեղ լալիս է և հեծեծում...» (213)։ Այս լացի պատկերը խիստ մարդկայնացնում է հերոսին. ամբողջապես մարդկային կերտվածքով է նա ներկայանում։ Նրա տանջանք-տառապանքի աղբյուրը մարդկության սոցիալ-տնտեսական դժնի կացությամբ էր պայմանավորված, սոցիալական անարդարությամբ ու թշվառությամբ, մահվան անխուսափելիությամբ. «Ուր նայում ես—հառաչանք—տուն չկա, որ դոհ լինի, մարդ չկա, որ բախտավոր լինի, մահ, կարիք, ցավ, երկյուղ, հուսահատություն... ահա ողջ կյանքը» (215)։ Օրագրում ուշադրավ է հերոսի ինքնահաստատման հեղինակային մեկնությունը. նա ներկայանում է ոչ թե կամքը թելադրող-պարտադրողի կնցվածքով, նրա սիրտը տրոփում է կյանքի, մարդու ճանաչման բերկրանքով. «...դեպի տանջանքը, կռիվը, դուքտը, ցավը, քաղցը... այս բոլորը՝ ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կամք դեպի գործ. գործել, միայն գործել։ Մարդկային սիրտը շատ աղքատ է խորին ու մեծ զգացմունքներով-պլատոնական սեր և ծնողական (մոր) սերն են շատ խորին, այնուհետև հայրենիքի, ազատության ու կրոնի սերը. հետո գիտության, գաղափարների...» (141)։ Այս դեպքում արդեն ճանաչողությունն առնչվում է սիրուն. իսահակյանական սիրո մեկնությունները հետաքրքիր են այն առումով, որ հենց ինքը՝ հեղինակն է լուսաբանում իր սիրո տարբեր եզրերը։ Այստեղ հետաքրքիր է ընդհանրապես մարդ-արարածի սիրո ընկալման իսահակյանական մեկնությունը՝ զգայականից դեպի բանական։ Հեղինակը հերոս է անվանում զգայականից դեպի բանականություն ընթացող էակին, իսկ երբ վերջինս ներկայանում է որպես զուտ բանական արարած, ապա գրողը նրան հերոս չի համարում։ Իսահակյանական հերոսը իր ակունքներում, թվում է, ընդհանրության եզրեր ունի Աստծո «լուսապսակ արևպսակ» էության հետ, մարդկության փրկության համար գիտակցաբար Գողգոթա ելած նրա Քրիստոս որդու հետ։ Թերևս անպայման այս մտայնության բանաստեղծական արձագանքն է 1895 թ. հունիսի 10-ի «Փշե պսակ ճակտիս դնեմ»-ի ստեղծագործությունը, ուր գրողի քնարական հերոսը ներկայանում է ամբոխի մեջ՝ «ջինջ սրտով» վեհ մտքեր տարածողի կեցվածքով վսեմ ապագայի ակնկալությամբ, խաչվելու գնացող Քրիստոսի «փշե պսակով»։

Մինչև 1896 թ. ապրիլյան գրառումները, Իսահակյանը օրագրում շրջանցում է հերոս-ամբոխ հարաբերությունները, մեկնում հերոսին ամբոխից անկախ։ Սակայն, հասկանալի է, որ հերոսը չի կարող դիտարկվել հասարակությունից կտրված օրենքներից դուրս, այն էլ հատկապես ռոմանտիկ բանաստեղծների ստեղծագործություններում, իսկ Իսահակյանի մոտ այն գլխավոր թեմաներից է, ուստի, հերոս-ամբոխ հարաբերությանն անդրադառնալիս, նկատում ենք հերոսի ինքնահաստատման հոգեբանական հետևյալ ընթացքը. մի դեպքում նա ըմբոստ է ու ընդվզուն՝ ամբոխի չհասկանալուց[25] չարա-

---

24 Վ. Հերանը «Փշե պսակ» անավարտ շարքի (1906—1908 թթ.) վեց բանաստեղծություններում կերտել է ազատության համար պայքարի ելած հերոսին։

25 Թվում է, այսօրինակ խոհերի արդյունք է նաև Ե. Թադևոսյանի «Հանճարը և ամբոխը» կտավը։

ցած, այլ պարագային այդ չհասկացվածությունը գիտակցորեն վերածվում է համբերության։ Այսպիսի մտայնության արդյունք է, օրինակ, «1903 թ. հունվարի 27, Բաքու» գրառման հինգերորդ մասը։ Ճիշտ է, միշտ չէ, որ ամբոխը հասկանում է հերոսին, սակայն չգնահատված հերոսը, օտարված ամբոխից, ամենևին էլ իր կյանքի իմաստը ավարտված չի համարում, այլ, հավատարիմ իր դավանանքին, գնում է. «...դեպի հեռուներ... վսեմ ափերը...» (293)։ Իսահակյանի հերոսը վեր է կանգնում ամբոխից՝ իր ոգով, կամքով, դավանած գաղափարախոսությամբ։ Այս հանգամանքը նկատի ունենալով էլ օրագրի հեղինակը վավերացնում է. «Ես ուզում եմ ասկետիկ ու պուրիտանիկ կյանք—լինել ասկետ և հենի, ողջախոհ, մտածող, երգող ու քրտնող, լինել մասսան՝ մտածող ու աշխատող, քրտնող ու երգող...» (189)։ Ուշագրավ է, որ հերոսի և զանգվածի էությունը բնութագրող երկու հատկանիշներն էլ հատվածում համընկնում են և կրկնվում՝ երգող ու քրտնող։ Գրողի կարծիքով, հենց այս հանգամանքն էլ հնարավորություն է տալիս հերոսին իր հեղափոխող էությամբ փոխել մասսային՝ վերջինիս միջոցով էլ վերափոխել կյանքը։ Այս վեհ նպատակի իրագործման միակ նախապայմանը Իսահակյանը համարում է կրթությունը, գիտության բարձունքների նվաճումը. «...ուզում եմ զարգանալ, որ կյանքը հեղափոխեմ... Մեր դարու նպատակը հեղափոխությունն է, արմատական ու հիմքով...» (189)։ Ամբոխ-հերոս հարաբերության նոր եզրեր ենք գտնում «1897 թ. հունիսի 28» գրառումներում. «...Թո՛ղ ամբոխը լինի ուրա՛խ, օպտիմի՛ստ և սիրե, իսկ թո՛ղ հանճարները նրա մեծ նպատակներն ու պտուղները լինեն մռայլ, տխուր, մտատանջ...» (240)։

Համամարդկային արժեքների հիմքով թելադրված՝ Իսահակյանի հերոսը միաժամանակ տարբեր ժողովուրդների հավատալիքների մարմնավորողն է ցանկանում լինել՝ «Բուդդա, Մովսես, Զրադաշտ, Քրիստոս, Մուհամեդ և Նիցշե» (190)։ Հեղինակը փիլիսոփա Նիցշեին տարբեր կրոնական պաշտամունքի աստվածների հետ նույն հարթության վրա է դնում, թերևս, հետևյալ պատճառով. հերոսի պաշտամունքը, զորեղ անհատի երազանքի որոնումները առնչվում էին արդեն Գևորգյան ճեմարանից սկսած ազգային մաքառման հոգեբանության. դաստիարակությանը, և օրագրի հեղինակը դիմում է Նիցշեին՝ հուզող բազմաթիվ հարցերի պատասխանների որոնումներում։ Ցանկացած հավատալիք իր առաջնորդն ունի, և այս հենքի վրա էլ նրան հուզել է Նիցշեի՝ գերմարդու գաղափարը, սակայն, իհարկե, ոչ այն որակը, որ գերմանացի մտածողն էր պատկերացնում, այլ իսահակյանական մեկնությամբ հայ հերոսը, որը պետք է ղեկավարեր ազգային-ազատագրական շարժումները։ «Հիշատակարանում» շրջանառության դրված «գերմարդ» անունը անմիջապես հիշեցնում է ժամանակի երիտասարդության կուռքին՝ գերմանացի մտածող Ֆ. Նիցշեին։ Եվ ընդհանրապես այլևայլ առիթներով Իսահակյանը բազմիցս անդրադառնում է Նիցշեի հերոսի բնութագրմանը և արդյունքում արձանագրում. «...Նիցշեն իմ մեջ արմատ չձգեց»[26]։ Գաղափարակիր հերոսի ստեղծման որոնումներում, բնականաբար, Իսահակյանին պետք է զբաղեցներ ոչ միայն Նիցշեի, այլև ընդհանրապես գերմանական գաղափարախոս հերոսը՝ Հեգելի, Շոպենհաուերի, Նիցշեի։ Սակայն եթե նրանց հերոսը լիարժեք դրսևորում է ստացել «բացարձակ ոգու» միջոցով, արտացոլում է բացարձակ իդեան, ապա հայ մտածողի հերոսը մարդն է, իր բառերով ասած «մարդը մարդու մեջ» (86, 87), ուրույն փորձաքար՝ մարդկային խորախորհուրդ էությունը բացահայտելու համար։ Ի տարբերություն գերմանացի մտածողների գաղափարակիր հերոսների, Իսահակյանի հերոսը մարմնավորում է XIX դարավերջի և XX դ. սկզբների հայ ազգային մտածողությունը։ Եվ ընդհանրապես, Իսահակյանը իր հերոսի մարդկային-բարոյական և հոգևոր նկարագիրը առավել ամբողջական ներկայացնելու նպատակով էլ հավանաբար

---

26 Ա. Ինճիկյան, Ավետիք Իսահակյան, Երևան, 1977, էջ 229։

մանրամասն է ներկայացնում և՛ իր հերոսին, և՛ անդրադառնում Նիցշեի ու իր հերոսի տարբերությանը։ Իսահակյանի հերոսը օրադրում պատվասեր, ազատատենչ և ասպետ անհատն է, որը նաև հասարակության անդամ է և ապրում է առաջին հերթին իր հայրենիքի հոգսերով ու վշտերով։ Ավելին, Իսահակյանի պատկերացմամբ, այդ գերմարդը ոչ միայն հայրենիքի զինվոր է, պաշտպան, այլև աշխատող, ստեղծող էակ. «Նա պիտի քրտինք թափե գյուղացու հետ, հովվի հետ անձրևի տակ թրջվի, ձկնորսի հետ ջրում թրջվի, որսորդի հետ քարև-քար ընկնի...» (122)։ Իսկ գերմարդու՝ որպես հայրենիքի զինվորի, ապա՝ հողի աշխատավորի ընկալումը հայ գրողի մոտ պայմանավորված է գուտ ազգային առանձնահատկություններով[27]։ Իսահակյանի գերմարդը առավել քան այլասեր է, որով էլ պայմանավորված են նրա առանձնահատկությունները. «Նա պիտի բոլորին ձեռք տա ու օգնե...» (123)։ Հեղինակի կարծիքով և պատկերացմամբ, կյանքը տրված է գերմարդուն հերոսաբար ապրելու համար՝ հանուն մարդկության բարօրության, և այդ ամենին նա պետք է հասնի սեփական կամքով, որն արդեն պետք էր ինքնագոյատևման, ինքնահաստատման համար։ Եթե Նիցշեի գերմարդը իր ճանապարհին հանդիպած բոլոր «ես»-երին ջարդում, ոչնչացնում ու ստորացնում է. «Թույլերը և անհաջողակները պետք է ոչնչանան—այս է առաջին կանոնադրությը մեր մարդասիրության։ Եվ պետք է միաժամանակ օգնել նրանց այդ գործում»[28], ապա հայ գրողի հերոսը բարու, մարդասիրության, հայրենապաշտական զգացմունքների կրող է, պայմանավորված նաև իսահակյանական մարդու անհատականությամբ, բարոյական խառնվածքով, հոգևոր արարման հանդեպ տածած պաշտամունքով։ Իսահակյանական հերոսը զգում, հասկանում է մարդ էակի ցավն ու տառապանքը և մորմոքում նրա համար. «Մարդի՜կ, երբ դուք տանջվում եք, ես էլ եմ տանջվում ձեզ հետ, ավելի խորը, քան դուք...» (151)։ Մինչդեռ, Նիցշեյան հերոսը ոչ միայն զուրկ է մարդու ցավը զգալու, վերապրելու ունակությունից, այլև ինքն է տանջանք պատճառում մարդկանց՝ բոլորին իր կամքը թելադրելով։ Նիցշեի հերոսը նույն հեդելյան բացարձակ ոգին է, որն արհամարհում է այն ամենը, ինչը մարդը երջանկություն է համարում՝ ընտանեկան կյանք, հարմարավետություն, փառք ու պատիվ, նույնիսկ՝ իմացության, գիտության հանդեպ տածած սեր։ Բարոյական օրենքը երբևէ նրա համար պարտադրանքի ուժ չի ներկայացնում. նա ինքն է իր համար ստեղծում սեփական բարոյականություն՝ շրջանցելով մերձավորի հանդեպ սերն ու տառապանքը։ Նրա բարձրագույն իդեալը հանդում է հետևյալին. մարդն այնպիսի արարած է, որին պետք է հաղթահարել։ Ահա և Իսահակյանի հերոսը, որը չի հակադրվում ամբոխին, ընդհակառակը՝ ամբոխից է ծնվել և նրա շահերն է պաշտպանում։ Սա հատկապես ակնառու է հեղինակի հետևյալ գրառման մեջ. «Ամբոխը պետք է ապրի, որ հանճար ծնի, իսկ հանճարը տիեզերքի մեջ հոգեկան տիեզերքն է... հոգի, ոգի դարձած. տիեզերքի և ամբոխի՝ այդ երկու կյանքերի նպատակն է հանճարը։ Հանճարը հրեղեն մարդն է (Նիցշեի ubermench-ը գերմարդը) հերոս է, հերոսը հրեղեն մարդ է» (268)։ «Հրեղեն մարդու» գաղափարը նույնպես Իսահակյանը առընչում է ոչ թե Նիցշեին, այլ՝ Վահագն աստծուց սերած ազգային ակունքներին. այս եզրակացության համար հիմք են գրողի 1900 թ. դեկտեմբերի 16-ի վկայությունները. «Պետք է ստեղծել «հրեղեն մարդիկ»։ Հրեղեն մարդ, որ հրեղեն խոսքեր ունենա և հրեղեն գործեր կարողանա կատարել...» (276)։ Եվ

---

27 Այսօրինակ մտայնության արդյունք են Սիամանթոյի «Դյուցազներները», Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը»։ Ահա և Վարուժանի հողի աշխատավորը «Հացին երգը» ժողովածուում. «Մշակներն՝ որ սայլերուն կատարին Աստվածներու պես կանգուն», «Սերմանողն է.—հաղթահասակ կը կանգնի ...Ոտքին առչև անդաստաններն հայրենի», նրա երակներում «քսան ցուլի արյուն է անցնում», «Արևն արդեն կը հոսի իր երակներն հրածորան», իսկ կրծքավանդակում «կը բարախե սիրտն հողին»։

28 Фр. Нитче, Антихрист. СПб., 1907, с. 82.

«հրեղեն մարդ» կերտելիս՝ հեղինակի երևակայությունը դրավում է ոչ թե XX դ. արևմտաեվրոպական փիլիսոփայական միտքը՝ իր դերմարդով, այլ հայկական հեքիաթները. «Հրեղեն... բառը, որքան ինձ հայտնի է, հայոց լեզվի և այն էլ հայկական հեքիաթների մեջ է գործածվում, ընաշխարհիկ, հրաշալի» (276)։

Հերոսի մասին իսահակյանական պատկերացումները կրում են Նիցշեի և Շոպենհաուերի ազդեցությունները՝ հատկապես կամային գործունեության դերապատվությամբ թելադրված։ Սակայն հայ մտածողի հերոսը վեհ է, մարդասեր, հետևորդը կանտյան բարոյական սկզբունքների, ազգային գրականության մեջ դարերից եկող մարդասիրության, այլասիրության հարուստ լիցքով օժտված. «Մարդկանց պիտի սիրել ավելի խորը, պիտի կարեկցել... այս է հերոսի վեհությունը» (140—141)։ Իր ժողովրդի արյունոտ ճակատագրին ականատես՝ Իսահակյանի հերոսը տարբերվում է արևմտաեվրոպական փիլիսոփաների հերոսից նաև ազգային շեշտված հատկանիշներով. «...հերոսը մի ազգի դիստիլիրը եղած կրիստալն է, նրա մեջ արտացոլվում են այդ ազգի ամեն հատկությունները...» (178), ասել կուզի՝ հերոսի և ժողովրդի արյան, դենի հարազատությունը։ Երբեմն էլ օրագրի հեղինակը հավասարության նշան է դնում հերոսի և ազգի միջև. «Մի հերոս, մի հենի մի ողջ ազգ է, մի ազգի զլուխ է, հենց այդ հիման վրա նա պիտի իշխե և ղեկավարե իր ազգը դեպի իր պաշտած իդեալը...» (178)։ Հերոսը մի ողջ ազգ է մարմնավորում, ուստի, նա պարտավոր է ղեկավար ու առաջնորդ լինել՝ ապահովելով գաղափարական հաղթանակի հեռանկարը, պատասխանատվություն զգալ ազգի ֆիզիկական գոյության ու հարատևման համար։ Քանի որ ազգային մտայնության նկարագրի ու հոգեբանության մարմնավորողն է հերոսը, իսկ հայ ժողովրդի քաղաքական կյանքը XIX դարավերջին և XX դ. սկզբներին տագնապալի կանխագուշակումներով էր լի, ուստի, Իսահակյան-մտածողը դեպի դարերի խորքն ուղղած իր հայացքով մտաբերում է շղթայված Արտավազդին և քարայրում փակված Մհերին։ Այս հերոսների ողբերգությունը դեռ չի ավարտված, և գրողին այս անգամ նրանց շղթայից ու քարայրից ազատող նոր հերոսի գոյության անհրաժեշտությունն է մտահոգում. «Արտավազդի շղթաները փշրող տվեք, Հայոց Արտավազդի։ Մհերի դուռը բացո՛ղ տվեք» (287)։ Արտավազդը իսահակյանական պատկերացումներում ներկայանում է ոչ թե Խորենացու[29], այլ՝ ըստ Կողբացու հանրահայտ տեղեկությունների, որի համաձայն՝ «...դա հայերի Մեսիան է, որի գալստին նրանք սպասում են...»[30]։ Ըստ էության, այս խորհրդածությունները հանգում են մերժված ու պատժված ուժին ու զորությանը. Զևսի դեմ ապստամբած Պրոմեթևսը, քարայրում բռնի բանտարկված Արտավազդը, քարաժայռում փակված Մհերը։ Վերջինս արդեն դուրս պետք է գար ոչ միայն ժողովրդի ազատագրության պայքարը ղեկավարելու, այլև հայոց ազատ ու հպարտ երկրում արդարության հաստատման առաքելությամբ։

Հայ ժողովրդի հերոսը, ի դեմ Իսահակյանի հերոսի, անցել է զարգացման ուրույն ճանապարհ։ Գրողը բացահայտում-պարզաբանում է, թե ինչպիսի մարդիկ են պետք ազգի փրկության համար՝ Արտավազդի շղթաները փշրող,

---

29 Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 205—206։ Այս մեկնությամբ է ստեղծված Հ. Հովհաննիսյանի «Արտավազդը»։

30 Г. Халатьянц, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, М., 1896. с. 319. Հետաքրքիր է, որ այս նույն ընկալմամբ էլ հայ ժողովրդի քաղաքական ծանր մի ժամանակաշրջանում՝ դորբաչովյան վերակառուցման տարիներին, երբ արցախահայության ազգային-ազատագրման համար ոտքի ելած հայության պատասխանը եղավ սումգայիթյան եղեռնը՝ նոր նախճիր XX դարավերջին, զերազույն իշխանությունից հուսախաբ հայ բանաստեղծուհին հիշեց նույն Արտավազդի լեգենդը. «Դարբիններ, ախր ո՞ւր եք դարկում միամիտ ձեր կոանը սալին. Աշխարհի և իր դեմ ահագնած՝ Մեզ մի նոր Արտավազդ է պետք» (Ս. Կապուտիկյան, Գիրս մնա հիշատակող, Երևան. 1988, էջ 411)։

մահերի դուռը բացող։ Այդ հերոսները XX դարասկզբի քաջարի ֆիդայիներն էին՝ Աղբյուր Սերոբը, Գևորգ Չաուշը, որոնց հերոսական պայքարն էր գովերգում բանաստեղծը «Մասսա Մանուկ» վիպասքում և «Հայդուկի երգերում»։ 1918—21 թթ. քաղաքական հզոր տերությունների խաղերում խաբված հայ ժողովրդի հերոսները, թուրք-բոլշևիկյան դաշինքից արնաքամ ու մկրատված Հայաստանի վիճակին ականատես, հիասթափություն ու ողբերգություն են ապրում։ Այդ հերոսները ներկայանում են Ե. Դաշտենցի «Ռանչպարների կանչում»[31]։

Իսահակյանը օրագրում ստեղծում է ոչ թե ստրկամիտ, կամակատար մարդկանց, որոնք հերոսանում են ուրիշի հրամանները կատարելով (Զևսի), այլ Գյոթեի Պրոմեթևսի նման ազատ, ինքնիշխան մարդկանց, որոնք ընդունակ են կանգնելու իրենց արարչի՝ բացարձակ ոգու կողքին, չհամաձայնելով կամ ըմբոստանալով նրա դեմ։ Հերոսության գաղափարը «Հիշատակարանում» բազմապիսի դրսևորումներով է ներկայանում. հեղինակը ոչ թե մեկ հերոս է կերտել, այլ՝ բազմաթիվ, որոնցից յուրաքանչյուրը, հոգևոր որոշակի արժեք կրելով հանդերձ, իր էությամբ սեր ու բարություն է պարգևում շրջապատին։ Հենց այդ էլ, իհարկե, իսահակյանական հերոսի առաջին ընդգծված տարբերությունն է գերմանացի փիլիսոփաների հերոսներից։ Իր բազմաբնույթ արտահայտությամբ Իսահակյանի հերոսը հարազատանում է շոտլանդացի փիլիսոփա, հրապարակախոս և գրաքննադատ Թ. Կարլեյլին։ Օրագրում Իսահակյանը մարդկանց բաժանում է երկու խմբի՝ փիլիսոփաներ և հերոսներ[32]. «հրեղեն խոսողներ, երգողներ, խորհողներ և հրեղեն կամքեր գործողներ...» (269)։ Ասել կուզի, մտածող և գործող՝ կատարող մարդիկ։ Թ. Կարլեյլը վեց խիստ տարբեր ոլորտների էր բաժանում հերոսներին[33]։ Իսահակյանի հերոսը օրագրում, Հայաստանի քաղաքական կացությամբ պայմանավորված, երկու սկիզբ է իր մեջ ամբողջացնում, նախ՝ գաղափարակիր, ապա՝ զենքը ձեռքին, մարտի դաշտում հայրենիքի համար մարտնչող զինվոր։ Քանի որ «Հիշատակարանի» հերոսի աշխարհայացքը ձևավորվել է սեփական կյանքի իմաստի մեկնության ճանապարհին ու նպատակով, Իսահակյան-մարդն իրեն արդեն հերոս է համարում և՛ իբրև ստեղծագործող[34], որ պայքարի է կոչում բռնության դեմ իր ժողովրդին, և՛ որպես հայրենիքի զինվոր։ «1897 թ. մայիսի 13, Ղազարապատ» գրառման մեջ, երբ պատմական խոր կտրվածքով թվարկում է քաղաքական ազատության համար տարբեր դարերում մարտնչող հերոսներին՝ Վահագնից, Արտավազդից սկսած, ընդ որում և՛ տղամարդ, և՛ կին, ավարտում է իր անվան հիշատակումով։

1920 թ. ազատ և անկախ Հայաստանի Հանրապետությանը պարտադրվում է բոլշևիկյան հասարակարգը, և երկրում ծայր են առնում բարոյական ծանր կորուստները, ավերելով և՛ ֆիզիկական, և՛ հոգևոր կյանքի հիմքերը։ Խորհրդային, այդ թվում նաև հայ գրականության մեջ սկզբնավորվում է կեղծ հերոսի գաղափարը։ Հայաստան երկրի քաղաքական ճակատագրով թե-

---

31 Գրականագետ Ս. Աղարարյանի հավաստմամբ, վեպի շարադրման գործում Վարպետը որոշակի դեր է խաղացել. «Ըստ երևույթին նա տեղյակ է եղել Դաշտենցի մտահղացմանը, և երկուստեք զրույցների ժամանակ ծնվել է վիպասքի գաղափարը» (Ս. Աղարարյան, Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, Երևան, 1982, էջ 167)։

32 Հերոսի, թերևս, նմանօրինակ տարբերակում է ենթադրում նաև Վ. Տերյանի հետևյալ ասույթը. «Մի Բաֆֆի, մի Արծրունի, մի Նալբանդյան, մի Դուրյան... գուցե ավելի մեծ հերոսներ են, քան նրանք, որ կռվի դաշտում են զոհաբերում իրենց կյանքը» (Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 317)։

33 Томас Карлейл, Герои и героическое в истории. СПб. 1898. с. 278.

34 Նմանօրինակ հերոս է «Ազատության զանգ» բանաստեղծության հերոս-հեղինակը։ Ամբոխ-հերոս ուրույն և հակոտնյա մոտեցմամբ է ծավալվում գրողի «երկու արվեստագետ» ստեղծագործությունը (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 3, Երևան, 1974, էջ 136—137)։

լադրված՝ առաջինը կեղծ հերոսներ է վրձնում Ե. Չարենցը «Երկիր Նաիրի» վեպում։ 30-ական թվականներն արդեն ստալինյան «հրաշք» հերոսների[35] ժամանակներն էին՝ ստալինյան բազեներ, ստախանովական շարժման հերոսներ։ Խորհրդային տարիներին էլ կերտվում են «բոլոր ժամանակների մեծ առաջնորդների» կերպարները։ Եվ այնուամենայնիվ, թվում է, խորհրդային իրականությանը բնորոշ «բռնակալ», «հոգևոր կորուստներ», «մասսայական հասարակություն» արտահայտությունները հիշեցնում են հեռավոր դարերի արձագանքները՝ մարմնավորված հին հունական առասպելաբանության ամենաողբերգական հերոսներից մեկի՝ Տանտալոսի կերպարում։ Վերջինս փորձում էր ապացուցել, որ հին աստվածները ամենակարող և ամենատես չեն՝ ջանալով մարդկանց ներկայացնել նրանց իրական ու ճշմարիտ էությունը։ Թվում է, երկու ժամանակահատվածների՝ XX դարասկզբի և մարդկության մանկական հասակի այս պատմական զուգահեռը հնարավորություն է տալիս ճիշտ իմաստավորելու ոչ միայն առասպելի էությունը, այլև համաշխարհային բանահյուսությանը քաջատեղյակ Իսահակյան-մարդու պահվածքը հատկապես 36—37 թվականների արյունոտ ժամանակներում։ Աշխարհի տերերը, հզորներն ու իշխանավորները միշտ էլ պետք է վայելեն ներքևում կանգնած մարդկանց զոհաբերությունները՝ մտայնություն, որ տարբեր ժամանակներում տարբեր ձևով և դիմակներով է ի հայտ գալիս։ Տանտալոսը հանդգնում է կարծել, որ ստորադասները նույնպես կարող են զորեղ լինել այնքան, որքան վերևինները, և այդ պատճառով էլ պատժվում է։ Եզրակացությունը հետևյալն է՝ հասարակ մահկանացուները պարտավոր են և պետք է հաշտվեն իրենց ճակատագրի հետ։ Իսկ 30-ական թվականների հայոց հոգևոր մշակների ճակատագիրը անչափ դաժան էր՝ Չարենց, Բակունց, Թոթովենց, Չ. Եսայան...։ Առասպելում ուշագրավ է մի հանգամանք ևս. «զուգվածային հասարակարգի» մասին խոսելիս (հավանաբար սոցիալական կառուցվածքի իրական փաստերը միմյանց հետ շփոթելով) հայտնվում է հետևյալ ենթադրությունը. «...հոգևորը կոչնչանա այդ զանգվածների ապստամբությունից...»[36]։ Այստեղ թերևս հարկ է մտաբերել Ն. Բերդյաևի, Վ. Սոլովյովի նախազգուշացումները հեղափոխության կազմակերպիչներին ու առաջամարտիկներին, թե հոգևոր աղքատին հեղափոխության կոչելը վտանգավոր է, մտայնություն, որ ներկա է 1903 թ. գրված Իսահակյանի «Ես Ձեզ ասում եմ կգա Ոգու սով» բանաստեղծության մեջ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ վտանգի տակ էր խորհրդային ողջ երկրի հետ նաև Հայաստանի ճակատագիրը, Իսահակյանը 1941 թ. հունիսի 22-ին գրում է «Ռազմակոչ» բանաստեղծությունը, որը տրամադրությամբ, հերոսական հզոր թափով, լեզվաոճական ատաղձով հոգեհարազատանում է «Սասունցի Դավիթ» էպոսին, և, հերոսի կերտման դավանանքի հավատարմությամբ, վրձնում նաև քաջարի հերոսների կերպարներ, ինչպես՝ «Սիրելի հերոս Ս. Գ. Զաքիյանի անմահ հիշատակին» բանաստեղծությունը։

Ավ. Իսահակյանն իր օրագրում՝ «Հիշատակարանում» դառնում է դարերի խորքերից սերող հայ հերոսի էության ու բնավորության յուրօրինակ մատենագիր՝ համոզված, որ իր դրառումները պետք են սերունդներին՝ դաստիարակելու ժողովրդի նոր հերոսներ՝ հանուն միացյալ, ազատ ու հպարտ Հայաստանի։

---

35 Ավ. Իսահակյանն իր ինքնագրում անդրադարձել է նաև այս հերոսների բնութագրին (տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Ավ. Իսահակյանի ֆ. № 27, էջ 13)։

36 Э. Агости, Возрожденный Тантал, М., 1969. с 46.

ИДЕЯ ГЕРОЯ НА ПЕРЕКРЕСТКАХ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ И В «ДНЕВНИКАХ» АВ. ИСААКЯНА

М. Г. ЗАКАРЯН

Резюме

Идея героя в армянской литературе стара так же, как сама наша литература. Образ героя представлен в армянской литературе героями мифологическими (Гайк Наапет, Ваагн), языческими царями (Тигран Великий) и героями-христианами (В. Мамиконян). В. Мамиконян— тот совершенный герой, образ которого без ощутимых изменений существовал в литературе вплоть до XVIII—XIX вв. В восточноармянской литературе Ав. Исаакян создал образ национального героя XIX—XX вв.